ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Արմինե Հարությունյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 3 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……....3

Տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական կարողությունները …….....4

Տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական վարպետության բաղադրիչները…10

Եզրակացություններ……..15

Օգտագործած գրականության ցանկ……..16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը: Նշված նպատակների արդյունավետ իրականացման գործընթացում կարևոր է տարրական դպրոցի ուսուցիչը, ում մասնագիտական պատրաստությամբ, կոմպետենտությամբ և աշխատանքի որակով է նաև պայմանավորված մեր հասարակության առաջընթացը: Տարրական դպրոցի ուսուցիչը միաժամանակ պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման, նրա սոցիալականացման, կրթության շարունակության ապահովման համար: Հենց այս նկատառումներով էլ պայմանավորված է **թեմայի արդիականությունը:**

Հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել ժամանակակից ուսուցչի մոդելը, նրան ներկայացվող պահանջները, քննարկել մանկավարժական վարպետության և տակտի հարաբերակցության հարցը, տալ ժամանակակից ուսուցչի իմիջի առանձնահատկությունները:

Աշխատանքի խնդիրն է՝ ուսումնասիրել ուսուցչի՝ ժամանակի հետ համաքայլ լինելու կարողությունների ձևավորման խնդիրը:

Հետազոտության տեսական նշանակությունն է ցույց տալ ուսուցչի անձնային և մասնագիտական որակների կապը, ուսուցչի անձնային և մասնագիտական որակների ձևավորման մեխանիզմները՝ ըստ մանկավարժական գործառույթների :

Հետազոտության գործնական նշանակությունն է բացահայտել ուսուցչին ներկայացվող ժամանակակից պահանջները:

Տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական կարողությունները

Մանկավարժական գործընթացի կատարումն իրականացվում է որոշակի փուլերով.

- ուսուցչի վարած ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության նախագծում
- արդյունքների կանխատեսում
- աշխատանքի պլանավորում
- նպատակների փուլային իրականացում
- արդյունքների վերլուծություն և ամփոփում:

Տարրական դպրոցի ուսուցչի կարևոր մասնագիտական որակներն են՝ առարկայական գիտելիքների առկայությունն ու համակարգայնությունը, ուսուցման մեթոդներու, տեխնոլոգիաների, միջոցների և ձևերի տիրապետումը, նորարարական մոտեցումների ու մասնագիտական համոզմունքների առկայությունը և այլն: Մասնագիտական կարևոր հատկանիշներ են նաև աշխատասիրությունը, կարգապահությունը, խոսքի և հաղորդակցման մշակույթը, կազմակերպվածությունը, պահանջկոտությունը:

Տարրական դպրոցի ուսուցչի համար կարևոր անձնային որակներ են մարդասիրությունը, բարությունը, մանկավարժական տակտը, համբերատարությունը, պատասխանատվությունը, լավատեսությունը, ապրումակցումն ու հուզական հավասարակշռվածությունը, ընկերասիրությունը, սկզբունքայնությունը և այլն:

Այսպիսով,եթե ընդհանրապես ժամանակակից ուսուցչին ներկայացվող առաջնահերթ պահանջներից է մասնագիտական գիտելիքների և մանկավարժական կարողությունների առկայությունը, ապա տարրական դպրոցի ուսուցչի համար առաջնային են նրա անձնային որակները, երեխաների նկատմամբ սերը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները:

Ի.Պ. Պոդլասին առանձնացնում է մանկավարժական կարողությունների հետևյալ խմբերը՝ կազմակերպչական, դիդակտիկ, զգայական, հաղորդակցական,

հետազոտական, գիտական-ճանաչողական, որոնք ապահովում են ուսուցչի գործունեության արդյունավետությունը: Դիտարկենք դրանք առանձին-առանձին. [4, 50-60]:

1.Կազմակերպչական. աշակերտների հետ իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքը պլանավորելու և կազմակերպելու, այդ գործընթացում պարտականությունները բաշխելու, արդյունքներն ամփոփելու և վերլուծելու ունակությունները:

2.Դիդակտիկ. ուսումնական նյութի բովանդակության ընտրության, դրանց ընկալմանը նախապատրաստելու, ուսումնական գործընթացի հետաքրքրաշարժությունն ու մատչելիությունը, ինչպես նաև անհրաժեշտ զննականությունն ապահովելու, աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները ձևավորելու և ընդարձակելու, ինքնադրսևորման կարողությունների զարգացումը խթանելու ուսուցչի կարողությունները:

3. Զգայական. երեխայի ներաշխարհ ներթափանցելու, նրան ապրումակցելու, նրա հուզական վիճակը հասկանալու, օբյեկտիվորեն գնահատելու և աջակցելու, հոգեկան առանձնահատկությունները և ընդունակությունները հաշվի առնելու որակները:

4. Հաղորդակցական. աշակերտների, նրանց ծնողների, գործընկերների և տնօրինության հետ ճիշտ հարաբերություններ հաստատելու կարողությունները:

5. Հուզակամային. աշակերտների վրա կրթադաստիարակչական գործընթացի հուզակամային ներգործության ապահովելու ունակությունները:

6.Հետազոտական. մանկավարժական գործընթացը հետազոտելու, մանկավարժական տարաբնույթ հիմնախնդիրները բացահայտելու, մանկավարժական գործընթացում առկա թերություններն օբյեկտիվորեն գնահատելու, շտկելու և ստեղծված տարբեր իրավիճակներից դուրս գալու ունակությունները:

7. Գիտական-ճանաչողական. մանկավարժահոգեբանական այլ բնագավառներից ունեցած գիտելիքներն ու կարողություններն անընդհատ զարգացնելու և կատարելագործելու անհրաժեշտության գիտակցում և դրանք իրականացնելու

ունակություններ: Հենքային մանկավարժության ընդունակությունների շուրջ այլ մոտեցումներ ունի ռուս մանկավարժ Ն.Վ. Կուզմինան:Նա մանկավարժի համար առաջնահերթ է համարում նախագծային, կառուցողական, կազմակերպչական, զգայական, հուզակամային, հաղորդակցական, խոսքային, ստեղծագործական, ակադեմիական, դիդակտիկ կարողությունները:

Անառարկելի է, որ մանակավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ուսուցչի՝ ինչպես մասնագիտական, այնպես էլ անձնային որակների համալիրի առկայությամբ:

Կազմակերպչական ընդունակություն: Ուսուցչի այդ ընդունակությունն ունի երկու կողմ. առաջին՝ ինչպես կազմակերպել ու համախմբել դասարանական կոլեկտիվը, երկրորդ՝ ինչպես կազմակերպել իր ուսումնական գործունեությունը: Առաջինի դեպքում ուսուցիչը ստեղծում է կուռ կոլեկտիվ: Ուսումնասիրում է դասարանի յուրաքանչյուր աշակերտի հոգեբանական ու անհատական առանձնահատկությունները: Ճանաչում է բոլորին և որոշում՝ ում հետ ինչպես աշխատել: Առաջին օրվանից սկսած՝ կոլեկտիվում ստեղծում է բարոյահոգեբանական նպաստավոր մթնոլորտ: Մշակում է առողջ փոխհարաբերություններ իր և աշակերտների միջև:

Երկրորդի դեպքում ուսուցիչը պլանավորում է իր աշխատանքները, ուշի-ուշով ուսումնասիրում է ուսումնական պլանը, ուսումնական ծրագրերը, ուսումնական ձեռնարկները,ուսուցիչների առաջավոր փորձը, կազմում է թեմատիկ պլան և այլն:

Այսպիսով, բազմահմուտ ուսուցիչը լավագույնս պատկերացնում է և՝ իր, և՝ աշակերտների ուսումնական գործունեության կազմակերպման ու իրականացման բոլոր մեխանիզմները:

Դիդակտիկական ընդունակություն: Ուսուցչի կողմից աշակերտներին ուսումնական նյութը հաղորդելու, այն մատչելի դարձնելու, նյութն ու հիմնախնդիրները պարզ ու հասկանալի մատուցելու, առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու, աշակերտների մեջ ակտիվ, ինքնուրույն միտք արթնացնելու ընդունակությունն է:

Բազմափորձ ուսուցիչը նախ խթանում է աշակերտների հետաքրքրությունները ուսումնական առարկայի նկատմամբ: Ուսումնասիրվող նյութը պարզաբանում է ամենայն մանրամասնությամբ, այն դարձնում ապացուցելի, հիմնավորում օրինակներով ու փաստերով: Աշակերտներին մասնակից է դարձնում նոր նյութի հաղորդմանը: Լսում է նրանց կարծիքները, տեսակետները, ակտիվացնում նրանց: Առաջադրում է պրոբլեմներ, պահանջում դրանք լուծել: Դժվարը վարպետորեն դարձնում է հեշտ, անհասկանալին՝ հասկանալի: Անպայման հաշվի է առնում դպրոցականների տարիքային հնարավորությունները,պատրաստության և զարգացման մակարդակները: Հասկանում է, թե տարբեր աշակերտներ ինչպես են յուրացնում ուսումնական նյութը և անհրաժեշտության դեպքում վերակառուցում նյութը պարզաբանելու եղանակները: Համախմբում է դպրոցականների ուշադրությունը, բարձրացնում նրանց տոնուսը, վերացնում անտարբերությունը, արգելակումը:

Ակադեմիական ընդունակություն: Ուսուցչի կողմից ավանդվող ուսումնական առարկայից ունեցած ընդունակությունն է: Այդպիսի ուսուցիչը երբեք չի բավարարվում ուսումնական դասընթացի ծավալով: Նա անընդհատ համալրում է իր գիտելիքները: Զբաղվում է ինքնակրթությամբ, պլանավորում է, թե տվյալ ուսումնական տարում ինչ գրականություն է կարդալու, որ թանգարաններում է լինելու և դրանցից ինչ գիտելիքներ է տանելու իր սաներին: Նման ուսուցիչն իր մանկավարժական վարպետությունը կատարելագործելու նպատակով ուսումնասիրում է ուսուցիչների առաջավոր փորձը, լսում է փորձառու ուսուցիչների վարած դասերը: Այդպիսի ուսուցիչը ձգտում է անմնացորդ տիրապետել իր մասնագիտությանը, դառնալ պրոֆեսիոնալ մանկավարժ:

Պերցեպտիվ ընդունակություն: Ուսուցչի կողմից աշակերտի ներաշխարհը թափանցելու ընդունակությունն է: Դժբախտ է այն ուսուցիչը, ով այս արվեստին չի տիրապետում: Մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչն աշակերտի ամենաչնչին նշաններից, արտաքին դրսևորումներից կռահում է նրա ներքին վիճակի փոփոխությունները: Աշակերտների աչքերից իմանում է՝ ով է դասը սովորել, ով չի սովորել, ում է վատ բան պատահել, ով է զանցանք կատարել և այլն:

Ուրեմն՝ արտաքին նշանները, արտաքին դրսևորումները մարդու ներաշխարհը ցույց տվող նշաններն են: Ուսուցիչը պետք է կարողանա որոնել ու գտնել դեպի աշակերտի սիրտը տանող ուղիները:

Խոսքային ընդունակություն: Ուսուցչի մտքերն ու զգացմունքները խոսքի, ինչպես նաև դիմաշարժության ու մնջախաղի միջոցով պարզ և հստակ արտայայտելու ընդունակությունն է: Հմուտ ուսուցիչն իր խոսքն այնպես է կառուցում, որ առաջին իսկ բառից, նախադասությունից ակտիվացնում է դպրոցականների միտքը և ուշադրությունը, իր խոսքին զուգակցում է հումորը, սրամտությունը, կատակը, բարյացակամ հեգնանքը:

Ուսուցիչն իր խոսքին պետք է տա չափված ձև, ակորդի, արվեստի բնույթ: Շատ կարևոր է նաև խոսքի տեմպը: Արագ տեմպը խանգարում է յուրացմանը, հոգնեցնում է դպրոցականներին: Բազմափորձ ուսուցիչը խուսափում է խոսքի դանդաղ տեմպից, քանի որ այն ձանձրույթ է առաջացնում: Խուսափում է նաև ճղճղան-ճչան ձայնից: Ցածր, կամաց ձայնը նույնպես անընդունելի է, որովհոտև վատ է լսվում այն: Ուստի՝ ուսուցչի ժեստերը պետք է լինեն չափավոր…

Անառարկելի հեղինակության հասնելու ընդունակություն : Ուսուցչի՝ իր սաների վրա հուզական-կամային ազդեցությունն է և այդ հիման վրա նրանց մոտ հեղինակություն ձեռք բերելու ընդունակությունն է:

Այդ հեղինակությունն ուսուցիչը ձեռք է բերում իր կողմից դասավանդվող առարկան խորապես գիտենալու, նրբազգացության, մանկավարժական տակտի շնորհիվ: Պետք է մշտապես իմանալ,որ ավտորիտար ընդունակությունները պայմանավորված են նաև ուսուցչի անձնական որակներով: Հանրահայտ ճշմարտություն է. հեղինակությունն արհեստականորեն ձեռք չի բերվում, այն ձևավորվում է բնական ուղիով, ստեղծարար աշխատանքում: Ուսուցիչն ինքն է իր էության հատիչներով հղկում ու ձևավորում իր համբավն ու հեղինակությունը:

Կոմունիկատիվ ընդունակություն: Երեխայի հետ հաղորդակից լինելու, նրանց հետ վարվելու, ճիշտ մոտեցում գտնելու, մանկավարժական տեսակետից նպատակահարմար փոխհարաբերություններ հաստատելու ընդունակությունն է: Սա մանկավարժական տակտի ապացույցն է: Հաղորդակցման մեջ ուսուցչի տակտի

դրսևորումներից մեկը չափի զգացման պահպանումն է, օրինակ՝ խրախուսանքի, հորդորի, պատժի և այլ դեպքերում: Մանկավարժական տակտի մեջ էականը նրա արդարացիությունն է, որն անմիջապես նկատում, զգում են դպրոցականները: Կատարյալ ուսուցչի համար բոլոր աշակերտները, անկախ այն բանից, թե ով ինչպես է սովորում, հավասար են:

Մանկավարժական երևակայություն: Ուսուցչի՝ իր սանի ապագան, հեռանկարը կանխագուշակելու ընդունակությունն է: Ուսուցիչը պետք է հավատա իր սանի և՝ ուսման, և՝ դաստիարակության հաջողությանը: Առանց դրանց անհնար է կանխագուշակել դպրոցականի ապագան, հեռանկարը, առաջընթացը: Իր սանի ապագան սխալ կանխագուշակող ուսուցիչը կարող է խաղալ նրա ճակատագրի հետ: Դժբախտ է այն ուսուցիչը, ով չի նկատում իր սանի ապագայի, հեռանկարի փայլատակող ճառագայթի՝ սքողված շողը: Ոչ մի նշանակություն չունի, թե դպրոցականն ինչպես է սովորում: Հոգու աչքերով պետք է տեսնել և հոգու կանչով կռահել նրա աստեղային ոգին:

Ուշադրությունը բաշխելու ընդունակություն: Ուսուցչի գործունեության մեջ կարևոր նշանակություն ունի իր ուշադրությունը բաշխելու ընդունակությունը: Դրա համար հիմք են հանդիսանում զարգացած ուշադրության բոլոր հատկությունները. ծավալը, ուժը, փոխանցելիությունը, ուշադրությունը կարգավորելու հմտությունը, նրանով խուսանավելը: Շատ կարևոր է, որ գործունեության բոլոր տեսակների միջև ուսուցիչը կարողանա բաշխել իր ուշադրությունը: Փորձառու ուսուցիչը ուշադրությամբ հետևում է իր կողմից ուսումնական նյութի շարադրանքին, իր մտքի ծավալմանը: Այդ ընթացքում իր տեսադաշտում է պահում դասարանի բոլոր աշակերտներին: Արտաքին նշաններից զգում է ոմանց անուշադրությունը, հոգնածությունը, նյութի շարադրանքի չհասկանալը, կարգապահության բոլոր խախտումները և հմտորեն վերակառուցում է ընթացքի մեջ գտնվող իր գործունեությունը: Ուշադրության բաշխման հետ մեկտեղ ուսուցիչը պետք է օժտված լինի ինքնազսպման հատկությունով, տիրապետի իր զգացմունքներին, կարողանա կառավարել իր տրամադրությունը, ապրումները: Դրա համար կարևոր նշանակություն ունեն նրա հաստատակամությունը, նպատակաուղղվածությունը, համեստությունը և այլ որակներ:

Ուսուցչի աշխատանքի հաջողության վրա մեծ ազդեցություն են գործում նրա ժամանակավոր հոգեվիճակները, օրինակ՝ տրամադրությունը: Ուրեմն՝ նա պետք է կարողանա տիրապետել իր հոգեկան վիճակին՝ անհաջողություններից խուսափելու համար:

Ուսուցչի արտաքինը, կեցվածքը, քայլքը, ձայնը, խոսելու տոնը պետք է գտնվեն իր իսկ ուշադրության կենտրոնում:

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Տարրական դպրոցի ուսուցչի աշխատանքն առանձնահատուկ է իր նպատակով ու խնդիրներով, բովանդակությամբ, միջոցներով ու ձևերով: Նրա մանկավարժական գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է իր մանկավարժական վարպետությամբ,որն իր մեջ ներառում է մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների համակարգը.

1. մասնագիտական և անձնային որակները
2. մանկավարժական գործունեություն վարելու համար անհրաժեշտ ունակությունները
3. մանկավարժական հաղորդակցման կարողությունն ու խոսքի մշակույթը
4. մանկավարժական տակտը և բարեկրթությունը
5. մանկավարժական տեխնիկան
6. մանկավարժական իմիջը
7. մանկավարժական անդրադաևձը

Մանկավարժական վարպետության կարևոր բաղադրիչն է մանկավարժական տեխնիկան, որն աշակերտների վրա արդյունավետ մանկավարժական ներգործություն ապահովող մեթոդների համակարգի կիրառելու հմտությունն է, անհրաժեշտ կարողությունների, շփման հարալեզվական միջոցների ամբողջականությունը: Շփման հարալեզվական միջոցները ներառում են ուսուցչի

խոսքի մշակույթը, այսինքն՝ նրա ճիշտ առոգանությունը, դամախաղը, ձայնի տեմբրը, ժեստերը և այլն:

Ուսուցչի վարպետության կարևոր բնութագրիչ է նաև մանկավարժական հաղորդակցման կարողությունը: Այն ուսուցչի և աշակերտի հարաբերության ձև է, նրա մանկավարժահոգեբանական ներգործությունն աշակերտների վրա՝ ստեղծելու համար անկաշկանդ և վստահելի հարաբերություններ: Մանկավարժական հաղորդակցումը ուսուցիչ-աշակերտ համագործակցային փոխհարաբերությունների կազմակերպման և զարգացման, փոխըմբռնման և փոխազդեցության բազմաբաղադրիչ գործընթաց է, որը բխում է նրանց համատեղ գործունեության նպատակներից:

Մանկավարժական մասնագիտական մշակույթը ենթադրում է բազմապիսի հատկանիշներ, ինչպիսիք են սերը երեխայի նկատմամբ, նրանց հետ համագործակցելու կարողությունը, հաղորդակցման ժամանակ վերապրվող ուրախությունը, երեխաների հետաքրքրությունների հավատարիմ պաշտպանությունը, արդարամտությունն ու պարկեշտությունը: [4, 53] Սովորող-ուսուցիչ հաղորդակցման միջոցով իրագործվում է սոցիալական, բարոյական, մշակութային, գեղագիտական, էկոլոգիական արժեքների փոխանցումն աճող սերնդին: Ընդհանրապես մանկավարժի, մասնավորապես տարրական դպրոցի ուսուցչի համար աշակերտների հետ հարաբերվելիս կարևոր է հաղորդակցման ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքայինը՝ հարալեզվական ձևը:Ոչ խոսքային հաղորդակցման ձևեր են ժեստերը, դիմախաղը, հայացքը, կեցվածքը, խորհրդանշային համակարգը և այլն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առանց դիմախաղի և սառը կեցվածքով ուսուցչի դեպքում աշակերտը կորցնում է տեղեկույթ 10-15 տոկոսը: Կրտսեր դպրոցականները շատ զգայուն են ուսուցչի հայացքի, դիմախաղի, շարժուձևի հանդեպ:

Մանկավարժների մասնագիտական պատրաստականության և հմտությունների մակարդակով է պայմանավորված աճող սերնդի ոչ միայն կրթվածության ցուցանիշը, այլև արժեհամակարգը: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը

պայմանավորված է այդ գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման հարցերում ուսուցչի կոմպետենտությամբ:

Կոմպետենտությունը գործունեության սուբյեկտի մասնագիտական որակների համալիրի ձոռքբերումն է, որը ենթադրում է համապիտանի(ունիվերսալ) գիտելիքների, կարողությունների, հմտություններու և անձնային որակների դրսևորում:Կոմպետենտությունը անձի կողմից որոշակի մասնագիտական որակների համակարգի տիրապետումն է, իսկ կոմպետենցիան՝ սովորողի գործունեության ընթացքում առարկայացված գիտելիքների, անձնային որակների, գործնական փորձառության համակարգը, որով էլ որոշվում է ցանկացած գործունեությանը անձի պատրաստ լինելը:

Ուշագրավ է 20-րդ դարի հոգեբան Կառլ Ռոջերսի <<Հարցեր, որ կուղղեի ինքս ինձ, եթե ուսուցիչ լինեի>> զեկույցում ներկայացված այն միտքը, թե ուսուցիչը պարտավոր է իր մանկավարժական գործունեությունն սկսել ներքոհիշյալ հարցերի ճիշտ ու ազնիվ պատասխանի դեպքում.

1. Կարող եմ արդյոք մտնել սովորող և հասակ առնող երեխայի ներաշխարհ:
2. Կարող եմ այդ աշխարհին վերաբերվել առանց նախապաշարումների ու կանխակալության, անձնական ու զգայական ճիշտ գնահատական տալ երեխայի դրսևորումներին:
3. Կարող եմ սովորողների հետ հաստատել բաց, զգացմունքային, փոխադարձ վստահության վրա հենված փոխհարաբերություններ, որից դուրս չմնա ոչ մեկը:
4. Կարող եմ արդյոք հայտնաբերել իմ դասարանի յուրաքանչյուր աշակերտի հետաքրքրությունների շրջանակը և ուղղորդել նրան՝ զարգանալու այդ ուղղությամբ:
5. Կարող եմ օգնել իմ աշակերտներին պահպանելու հետաքրքրասիրությունն իր և իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ:
6. Ունեմ արդյոք այնքան ստեղծարար ուժ, որ կարողանամ մեր երեխաների մեջ

զարգացնել սեր ու հետաքրքրասիրություն գրքերի ու գիտելիքների, այլ աղբյուրների նկատմամբ:

7. Կարող եմ ընդունել և խրախուսել այն բոլոր անկատար գաղափարներն ու մտահղացումները, որ ծնվում են սովորողների գլխում:Կարող եմ զարգացնել բոլոր ոչ ստանդարտ վարքի ու մտքի տեր երեխաների ստեղծագործական մտածողությունն ու ունակությունները:
8. Կկարողանամ օգնել երեխային՝ մեծանալու որպես անհատականություն, այնպիսին, որի մեջ գաղափարները զգացմունքներ կառաջացնեն, իսկ զգացմունքները՝ գաղափարներ[1,12-13] :

Այս հարցերի պատասխաններով,կարծում եմ,կարելի է հստակորեն պատկերացում կազմել ուսուցչի հոգեբանամանկավարժական դիմանկարի մասին:

Ժամանակակից կրթական համակարգում տարրական դպրոցի կոմպետենտ ուսուցչի պատրաստումը համարվում է գերակա խնդիրներից մեկը: Անընդհատ փոփոխվող ժամանակակից դպրոցն զգում է կոմպետենտ, մրցունակ այնպիսի մանկավարժների կարիք, ովքեր ունակ են ստեղծագործաբար լուծել մասնագիտական խնդիրները, ինքնուրույն հայթայթել գիտելիքներ, կիրառել դրանք և ձևավորված մանկավարժական կարողություններովպատրաստ կլինեն մասնագիտական շարունակական կատարելագործման:

Մանկավարժական մասնագիտական կոմպետենտության բաղադրիչ է անդրադարձը(ռեֆլեքսիան): Այն անձի կողմից ներքին հոգեկան գործընթացների և վիճակների ճանաչումն է, մարդու ներհայեցողությունը՝ ուղղված սեփական գործողությունների, ներքին վիճակների, զգացմունքների, ապրումների իմաստավորմանը, վերլուծությանը և համապատասխան եզրահանգումների կատարմանը: Մանկավարժի գործունեության մեջ անդրադարձը էական նշանակություն ունի , քանի որ մասնագիտական փորձի և նրա ռեֆլեքսիայի զուգորդումն է հանգեցնում մասնագիտական զարգացման և կատարելագործման: [5, 63-67]

Ուսուցիչ-դաստիարակը պետք է լինի համբերատար, ուշադիր, հոգատար, սիրի իր սաներին, լինի կրթված ու դաստիարակված, անընդհատ ու անդադար հարստացնի իր գիտելիքները, նյութը մատուցի պարզ ու հասկանալի, նա պետք է լինի ոչ կրկնվող, այլ մշակող, վերլուծող, համադրող, պարզաբանող…խոսքը՝ պատկերավոր, գրավիչ, օրինակներով հարուստ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսօր ժամանակակից դպրոցի գերխնդիրն է կոմպետենտ մանակավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապասխան մանկավարժական պայմաններ:

Ուսուցչի մասնագիտության մեջ առանցքային է համարվում երեխաների հանդեպ սերը, կապվածությունը նրանց հետ, նրանց հետ աշխատելու ձգտումը /նույնիսկ կենսականպահանջը/: Այս ամենը դրսևորվում է երեխաների հետ աշխատանքում ուսուցչի խորը բավարարվածությամբ, մանկավարժական շփման, նրբանկատության, անկեղծության և անմիջականության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Զ. Ա., Տարրական կրթության մանկավարժություն, Երևան, Տիգրան Մեծ, 2017թ:
2. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա., Օհանովա Խ., Վարդումյան Ս., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., Թորոսյան Կ., Թերզյան Գ., Սարգսյան Ս., Պետրոսյան Մ., Սարգսյան Ա., Դալլաքյան Ա., Ավանեսյան Վ., ՈՒսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը - ձեռնարկ ուսուցիչների վերապատրաստման համար., Երևան, «ԱՅՌԵՖՍ»., 2007 թ:
3. Բլեյան Ա., Ժամանակակից և հանրամատչելի մանկավարժություն, Երևան Շաղիկ, 2000թ.:
4. Դալլաքյան Ա. Հ., Մանկավարժական հաղորդակցումը՝ որպես տարրական դասարանների ուսուցչի մասնագիտական կոմպետենտության հիմք. Մանկավարժական միտք, Երևան, 2012:
5. Հակոբյան Գ. Հ., Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողի մասնագիտական կոմպետենտությունների ձևավորման տեսական-մեթոդաբանական հարցեր: Մանկավարժական միտք, Երևան, 2013: